աբեղային և զԹադէոս հայր ճգնաւորն և զԱռաքել կրօնաւորն և զԱբրահամ միակեցն և զԳրիգոր միակեցն և զփծուն գրչակս, ամէն։

Այլ և զհոգևոր հայրս, զտէր Յովհաննէս եպիս. մականուն տավիղ և զիւր հոգևոր որդիք. զտէր Տաւնավանի կրօնաւորն և զԱս-տուածատուր կրօնաւորն. զտէր Մարտիրոս եպիսկոպոսն Պուրսացի, որ աշխատեցաւ և ծաղկեց զգիրքս և յայսմ ամի եկին ի Սինէ-ական անապատէն և խպուհի վանքերուն և բերին զսբ. հարանց օրհնութիւնն յԵրուսաղէմ ի մեզ։

Դարձեալ յիշեցէք ի տէր զվերակացու և զհրամանատար սբ. Յակոբայ վանիցս զպարոն Մղատուն Սըմնան և զտէր Պետրոս եպս.ն և զԱստուածատուրն հայրպետն և զայլ սպասաւորս եկեղեցեացն ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քս. ԱԾ. զստացող սբ. գրոցս զԱբրա-համ կրօնաւորն և ծնողքն իւր զՄկրտիչ և զՀայկիկ Մելիքն և զհանգուցեալ եղբայրն իւր զԱռաքելն և զքոյրն իւր զԽութլուն և զայլ արեան մերձաւորքն ամէն։ Այլ և զԱռաքել ճգնազգեաց կրօ-նաւորն և ծնողքն իւր զԱստուածատուրն և զՈսկիհանն և զեղբայրն իւր զՎարդանն և զայլ արեան մերձաւորսն։ Այլ և յիշեցէք ի տէր զՄարգարէ սուտ անուն աբեղայս. որ տկար անձամբ ու անարհեստ գրչութեամբս յանձն առի և Այ. կարողութեամբն յանկ հանի ու կատարեցի։ Աղաչեմ զձեզ եղբարք, զի խոշո-րութեանս և սղալանացս անմեղադիր լինիք. զի կար մեր այս չափ էր, այլ և զԱԾ. ողորմին մի՛ մոռանայք ինձ և ծնողացն իմոց Ներսէսին և Խաթունին և հաւր եղբաւրն իմ Ղազար քա-հանային և Բ. քուերցն իմ Մարիամին և Աննային...։ Դարձեալ գիտասջիք, ով Մանկունք եկեղեցւոյ, որ եղաք զԱյսմաւուրքս ի սբ, քաղաքս Երուսաղէմ. ի վանքս Ս. Փրկչին...։» (Խապ. Ցուց. էջ 131)։

ՄԱՐԳԱՐ ԽԱՆՏԱՄԵԱՆ.— Ոսկերիչ Դամասկոսի կուսակա-լին. ծայրագոյն կառավարիչ Պօղոս պտրք.ի օրով՝ ուխտաւորու-թեամբ Ս. Յակոբի վանքը կ'այցելէ և իր ազդեցութեամբը կը գլուրացնէ աթոռապատկան գործերը եւ պարտուց վճարումը (ժպե. Բ. Հատ. էջ 438)։

ՄԱՐԳԱՐ ՍՐԿ. ԿԱՄԱԽԵՑԻ.— Մբ. Գրիգոր վրդ. Դարա-նաղցի (էջ 74) կը գրէ թէ՝ Մարգար սրկ. քսան և հինգ տարի